

չազուարճ օտախն Որդուստայ, Երասխ գետին ձախակողմեան եզերքը:

Բայց այս կարծիքս ունի իւր հակառակ առարկութիւններ: Փխոն և Գեհն կ'ընթանային, մէկն՝ յերկիրն Եւիլթայ, միւսը՝ յերկիրն Քուշաց: Արդ առաջարկեալ ենթադրութիւնքն չունին ճշմարտութեան նշան մը նկատմամբ այս կէտին, և անօգուտ ժամանակ կորսնցնել կ'ըլլար փնտռել զենթովագիս յընթաց ճորտայ կամ փասիս գետոցն, կամ նոյնացնել զկողքիս Եւիլթայ հետ: Բաց աստի փասիս դետն ոչ ակամբը և ոչ ընթացքովն կը մերձենայ Եփրատայ և Տիգրիսի: Իսկ միւս չորս գետերն՝ եթէ աշխարհագրական տախտակի վրայ նկատենք յուղիղ գիծ, կը տեսնենք որ ի մերձաւոր ականց կը ըլլաին. բայց Եփրատ և Տիգրիս գետոց ականց մէջ ամբողջ գաւառ մը կայ, զոր յաղթութեամբ տիրապետեալ կը պարծի Սաղմանասար Բ. և աւելի ևս երկու ականց մէջ փոխանակ քաղաքի, ոչ միայն ըլլաւ՝ յիւ Հայոց բարձրագագաթ ընթաց կեդրոնական շղթայն կայ: Իսկ պաշտպանք այս կարծեացս կը համարին թէ այն ընդինքն բարձրացան յետ ջրհեղեղի, աղաւաղելով այսպէս բովանդակ տեղագրութիւնն այն կողման: Բայց մենք կանխաւ ըսինք թէ Մովսէս կը նկարագրէ զտեղի Դրախտին՝ ինչպէս որ իւր ժամանակն էր յետ ջրհեղեղի: Անտի գետն յաժամնի ի չորս առաջս:

Շարունակի

Ի ԵԱՅՈՒ ՏԵՏԵԱԼ

ՄԵՐԶ Ի ԲԵԱՂԸԴԻՍԱՆԷ

Հոս կանգուն կամ ես բիւր գարերէ,
 Եւ հրեղէն արեգակն ամառան
 Բոցաթռի պլաքներով զիս կերէ:
 Հոս կամ ես անժըպիտ՝ անսասան,
 Հարուածեալ ի հողմոց տխրանուագ
 Գիշերայն խոյացեալք յանսահմանն,
 Մերթ երկնից կ'ողողեն զիս սահանք,
 Մերթ տարափը օդապայտ ձիւներու
 Սառուցէ կը հիւսեն ինձ պատանք:

Երգ ունին անտառներ, և ծովու
 Մութ անդունդք՝ հառաչներ, և անոյշ
 Ժրպիտներ հոյլք աստեղց, և աղու
 Բոյրերով կըսփոփուի վարդ քնքոյշ.
 Իսկ ես հոս կաշկանդեալ անլեզու
 Համր լստրուկ եմ բաղդին չարագոյծ,
 Եւ լռութիւն զիս պատէ, և՛ ահարկու
 Վեհն երկնից աստղերովն հեռաւոր՝
 Երջանիկ եղբայրներս օգալու:
 Այլ ծաղկի մը բաժակ լուսաւոր
 Ծըլեցաւ քովս երբէք՝ ոչ թուփ մի
 Ճանցառ չուքն ինձ շնորհեց գէթ մի օր.
 Այլ, եղուկ՝ յիմ՝ ճաղատ լերկ գլխի
 Բոյն կապեց մէկ թռչնիկ, կամ յողնած
 Ուղեւորն հանգչեցաւ առ վայր մի:
 Եւ իմ շորջս ահա կեանք պարոյսած
 — Յար կանգնող և փլշող ովկէան —
 Կը սրակէ շուրջ փրփուրս աստեղաց:
 Ի՞նչ կաղնիք երկնաբերձ կանգնեցան
 Հոս իմ մօտ՝ բարերար հովանին
 Սփռելով լեռներէն ի ձորն այն..
 Քանի բոյնք աստոց մէջ՝ ւ՛ի հովտին
 Քանի հոյլք երազող աղլըկանց՝
 Խեղճ ծաղիկք ծըլեալք յեզըր շիրմին:
 Այլ կաղնին օր մի հողն էր փռուած
 Իբր յողնած կռուելէ մրկին գէմ,
 Եւ աղկուկք երազոց հետ ցնդած.
 Ի՞նչ. լոկ ես պիտի բնաւ յըճանցեմ
 Մեռնելու հեշտութիւնն, այլ չորս դիս
 Կեանքը նոր նոր պիտի միշտ տեսնեմ:
 Եւ սակայն հըրոյ կայծն իմ ծոցիս
 Իմ լանջաց մէջ ալ վառ՝ կըսպասէ
 Մէկ հարման որ սլանայ դէպ յերկինս.
 Ես ալ նոյն եմ իջած աստղերէ,
 Մասն եմ նոյն եթերին համասփիւռ՝
 Որ աստղեր և վարդեր յերկւրէ:
 Երբ չիլաւ բորբոքեան ի յիս հուր՝
 Զիս պատող ծովերէն ցցուեցայ
 Ողջունել զարեգակ կենսատուր.
 Այլ ինձ հոն վճռեցաւ առնուլ կայ՝
 Կանգաղեալ լայնանիստ վրհից տակ

Իբրեւ կմախք որ ըզգունդս այս բառնայ,
 Մովասոյդ մօտ հիմանցս անյատակ
 Աշխարհներ շինելու պարագող
 Կը լսէի ես որդանց ըզլատակ.
 Նոր կղզեակք ցցուէին լուսայող
 Ձոր դիւթիչ մահակաւ կեանքն իսկոյն
 Կը փոխէր 'ի մի դրախտ զօյնտող:
 Իսկ ես հոս կամ պրկեալ— Մարդկութիւն
 Չարթընցած դեռ. — գուցէ ալեաց պէս
 Իւր գլորին ալ տեսնեմ յունջն անհուն,
 Աւսպանեմ որ յեղծեալ տիեզերս
 Կոյր աստեղք իրարու ընդհարեալք
 Քայքայեն զիս նորէն յիմ տարերս,
 Եւ սակայն գուցէ նիւթքն իմ ցրուեալք
 Դառնային ցօղ որ կեանք կայլակէ
 Տօթահար մէկ ծաղկի մ'ի բաժակ.
 Գուցէ թուփ մ'ըլլայի մացառէ
 Որոյ տակ գալարի կասկածոտ
 Օձն հիւծեալ աղեկէզ ծարաւէ.
 Կամ 'ի նշոյլ փախուէին որ ընդօդ
 Թռուցեալ նախ քան զարե՝ թշուառին
 Որ հսկէ՝ աւետէր զառաւօտ:
 Կամ թերեւ մոռնէի՝ խոն բաժին՝
 Յերկնաշէն այն տաճար ըզեղի՝
 Որսրոց մըտածմանց քերդողին:
 Ո՛հ, երբ մատ քան զիս կարծր բազդի
 Ի դանդաղ ժամահարն Յաւիտեանց
 Փրկութեան ժամն հնչէ ինձ պիտի...
 Է՛ջ, հրաթե դու կայծակդ 'ի բարձանց,
 Է՛ջ՝ փշրէ կապն որ զիս կաշկանդէն.
 Է՛ջ, փշրէ զիս, ցրուէ նիւթքս 'ի բաց,
 Զի մահուամբ միայն կեանք կաս աստէն...

Թ. ԹԵՐԱԶՅԱՆ

